Վան քաղաքը հայանվել է լճակի հարավ-արևմտյան ափին, Խոյը փոխել է իր տեղը և այլն)։ Պարզվում է, որ նույն այդ քարտեզը (1751 թ. հրտ.) օգտագործված է եղել նաև «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ի հեղինակ Մ. Բաղրամյանի կողմից՝ հատկապես այդ գրքի 6-րդ գլխում, որտեղ տրված է Հայաստանի պատմական աշխարհագրությունը։ Թե որքան նմանություններ կան աշխարհագրական մի շարք անունների մեջ այդ երեք գործերում, երևում է ստորև զուգահեռ կերպով բերված օրինակներից.

1751 թ. «Աշխարհացոյց Հայաստանեայց»	«Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»	1778 թ. «Աշխարհացոյց Հայաստանեայց»
Կուբ գետ որ է Քուռ	Կուբ գետոյ որ է Քուռ (էջ 124)	Կուբ գ., որ է Քուռ
Կարին որ է Արզրում	Կարին որ է Արզրում (էջ 133)	Կարին Արզրում
Ամիդ կամ Տիգրանակերտ	Տիգրանակերտ որ է Ամիդ... և ըստ տաճկաց Դիարբէքիր (էջ 142)	Տիգրանակերտ որ է Տիարպէքիր
Ղարս որ է Կարս	Կարս որ է Ղարս (էջ 133)	Ղարս որ է Կարս
Պաղեստին Հրէաստան	Պաղեստին կամ Հրէաստան (էջ 73)	Պաղեստին
Տիգրիս գ. և Դիգղաթ որ է Շատ	Տիգրիս որ և կոչի Դիգլաթ (էջ 123)	Տիգրիս գ. որ է Շատ
Եգեսիա Յուրհայ	Եդեսիա որ և ասի Յուրհայ (էջ 73)	Եդեսիա որ է Ուրհայ
Եկբատանք որ է Արազստան	Ի սահմանս Եկբատանացւոց կամ Մարաց, որ և կոչի Արազստան ուրանոր է մայրաքաղաքն Եկբատան կամ Ահմատան որ է Համատան (էջ 123)	Եկբատանք որ է Համատան
Եկբատանք մարաց որ է Ահմատան կամ Համատան		

Ինչպես երևում է, մադրասցիները, դուցե և ինքը՝ Շ. Շահամիրյանը, հենց տեղում՝ Մադրաս քաղաքում որոշ աշխատանք են տարել «Աշխարհացոյց Հայաստանեայց»-ի վրա, նշել են հայ-վրացական պետության սահմանները, գրել են հիշատակարանը, տվել նրա արտաքին ձևավորման էսքիզը։ Մյուս աշխատանքների մասին դժվար է առայժմ խոսելը, կարծում ենք սակայն, որ այդ ուշագրավ հարցերի վերաբերյալ տեղեկություններ կարող են լինել Վենետիկյան Մխիթարյանների արխիվում և համապատասխան պրպտումների դեպքում հնարավոր է վեր հանել «Աշխարհացոյց Հայաստանեայց»-ի կազմման գործում մադրասցի հայրենասերների կատարած կոնկրետ աշխատանքը, բացի այդ, պարզել կարևոր մի հարց, թե ո՞վ է եղել քարտեզի փորագրողը։

Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի (1780—1799 թթ.) նամակներում, ինչպես արդեն նկատել է Ա. Ռ. Հովհաննիսյանը[11], տեղեկություններ կան այն մասին,

[11] А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947, էջ 152։